Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-1250[1]-26.01.2026-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2111 -րդ հոդվածի 5-րդ մասում կիրառվող «մամուլի ու» և «մյուս» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասում «զանգվածային լրատվության միջոցներում» բառերը փոխարինել «ինտերնետում՝ բանկերի տնային էջում, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 3. Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին մասի՝

ա. «ա» կետում «մամուլում սույն օրենքի 59 հոդվածով սահմանված ժամկետում, ինչպես նաև հրապարակել դրանք» բառերը հանել.

բ. «բ» կետում «:Ընդ որում, բանկերը պարտավոր են տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակել նաև մամուլում» բառերը հանել.

գ. «ե» կետին հաջորդող պարբերությունում «, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով» բառերը հանել:

Հոդված 4. Օրենքի 59-րդ հոդվածում «մամուլում» բառը փոխարինել «ինտերնետում՝ բանկերի տնային էջերում» բառերով:

Հոդված 5. Օրենքի 74-րդ հոդվածի 3-րդ մասում «մամուլում» բառը փոխարինել «ինտերնետում՝ բանկի տնային էջում, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 6. Օրենքի 75-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում» բառերը փոխարինել «ինտերնետում՝ բանկի տնային էջում, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով.

2) 4-րդ մասի՝

ա.առաջին նախադասությունում «հաշվեկշիռը հրապարակած թերթի մեկ օրինակը» բառերը փոխարինել «հաշվեկշռի վերաբերյալ հրապարակային ծանուցման նույնականացման համարը կամ հայտարարությունը հրապարակված լինելու փաստը հավաստող էլեկտրոնային փաստաթուղթը, ինչպես նաև# հրապարակային ծանուցման հղումը» բառերով,

բ. երկրորդ նախադասությունում «առնվազն 2000 տպաքանակ ունեցող այլ մամուլում» բառերը փոխարինել «ինտերնետում՝ բանկի տնային էջում, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 7. Օրենքի 751-րդ հոդվածի 3-րդ մասի՝

1) երրորդ պարբերությունում «մամուլով կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով» բառերը փոխարինել «ինտերնետում՝ բանկի տնային էջում, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակմամբ» բառերով:

2) չորրորդ պարբերության՝

ա. առաջին նախադասության «մամուլով և (կամ) զանգվածային լրատվության այլ միջոցներով» բառերը փոխարինել «ինտերնետում՝ բանկի տնային էջում, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակմամբ» բառերով,

բ. երկրորդ նախադասության «մամուլով և (կամ) զանգվածային լրատվության այլ միջոցներով» բառերը փոխարինել «ինտերնետում՝ բանկի տնային էջում, http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 8. Օրենքի 76-րդ հոդվածի 3-րդ մասում «մամուլում» բառը փոխարինել «ինտերնետում՝ բանկի տնային էջում, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: